նում էր Կարինից դէպի Պարսկահայաստանի միջնաշխարհ, Այրարատեան դաշտը։

Սակայն, մի քանի դիտողութիւններ դրդեցին մեզ ընդունել, որ Հասան-Կալէի տեղը եղել է Վաղարշակերտ անունով մի քաղաք։

Ներսէս շինողի համար ասուած է, որ «զՎաղարշակերտոյ սուրբ Աստուածածինն շինեաց»։ Կոստանդին կայսրը դալիս է իջեւանում Կարնոյ դաշտում եւ նրան ներկայանում է Վաղարշակերտի վրաց եպիսկոպոսը։ Կայսրը Բասենի Սալքորա գիւղում եղած ատեն, նրա մօտ է դալիս դարձեալ Վաղարշակերտի եպիսկոպոսը, անունը Զաքարիա։

Վրաց եպիսկոպոսի ներկայութիւնը խօսում է յօդուտ Բասենի եւ ոչ Բագրեւանդի Վաղարշակերտի։ Կարին եւ Սալքոլա վաղող եպիսկոպոսը եւս, թւում է թէ, նստած էր Բասենում, քան Բագրեւանդում։ Վրաց քաղաքական եւ կրօնական ազդեցութիւնը զօրանում է Տայքում եւ նրա շրջապատում մանաւանդ Դաւիթ Կուրոպալատի իշխանութեան ժամանակ։ Դրացի Բասենը կարող էր այդ ազդեցութեան ենթարկուել եւ անդամ վրացի եպիսկոպոս ունենալ։ Իսկ հեռաւոր Բագրեւանդը դուրս է վիրական յաւակնութեան շրջաններից։

Ներսէս շինող եպիսկոպոս էր Տայոց եւ ծընընդեամբ Տայքի Իշխան գիւղից։ Կաթողիկոսանալուց յետոյ, երբ դժտուեց Թէոդորոս Ռշտունի իշխանի հետ, նա քաշուեց Տայք եւ մնաց վեց տարի։ Նրա շինարարութեան արդիւնքն է Թերեւս Բասենի Ս. Աստուածածին եկեղեցին, մօտ Հասան-Կալէի, եւ ոչ Բագրեւանդի Վաղարշակերտի համանուն եկեղեցին։

Այս խորհրդածութիւնները ակամայից ծնում են մի ենթադրութիւն, որ Հասան-Կալէի Ս. Աստուածածինի մօտ Վաղարշակերտ անունով քաղաք է եղել. եւ այս քաղաքը զատելու է ե՛ւ Վաղարշապատից, ե՛ւ Բագրեւանդի Վաղարշակերտից։

Պ. Խաչատրեան, որ մեր դրքի կոչումներից կարող էր կռահել գործի էութիւնը, դեռաղասում է դիւրին ուղին ընդգծելով, որ մենք իբրեւ թէ չփոթել ենք Բագրեւանդի Վաղարշակերտը Բասենի Վաղարշաւանի հետ, որ Վաղարշակերտը արաբ եւ պարսիկ հեղինակների մօտ կոչւում է Վալաշկերտ, որտեղից արդի Ալաշկերտ։

Նախ ոչ մի օտար հեղինակ չէ յիշում Վալաշկերտ անուն քաղաք Հայաստանում։ Կայ եւ յիշատակւում է Վալաշկերտ եւ Գուլաշկերտ Պարսկաստանում, որ բոլորովին կապ չունի մերինի հետ, բացի անունից։

Յետոյ՝ Վալաշկերտից ի՞նչպէս է ծագել Ալաշկերտ։ Լեման եւ Բելկ՝ կարծիք են յայտնել, որ Ալաշկերտ աւելի հին է քան Վաղարշակերտ եւ որ խալդական անուն է alu Anashi, որից Ալաշկերտ, որպէս Անաշիկերտ։

Վաղարշակերտ, ուրեմն, մի տեսակ վարժապետական հայացումն է, ինչպէս Մենուասի քաղաքը դարձել է Մանուազակերտ, եւ Նախճուանը՝ Նախիջեւան։

Թւում է որ առաջին անդամ Յովհան կաթողիկոսն է, որ հանդէս է բերում Վաղարշակերտը, առանց տեղը որոշելու, Յուսուփի հալածանքի ժամանակ։ Սրան հետեւում է Ասողիկ։ Իսկ Լաստիվերտցու ցուցումները տանում են մեզ աւելի դէպի Բասեն։

Լաստիվերտցին գիտէ եւ Վաղարշաւան նոյն դաւառում։ Եւ այս հանդամանքը արդելք չի կարող լինել, որ Վաղարշակերտը եւս Բասենում լինի։ Արշարունիքում երեք քաղաք կար միեւնոյն թագաւորի անունով՝ Երուանդաշատ, Երուանդակերտ եւ Երուանդաւան։

Այսպիսով, չփոթութեան հարց չկայ, այլ մի խուլ ենթադրութիւն, որ վրաց եպիսկոպոսի աթոռանիստ Վաղարշակերտը իր Ս. Աստուածածին եկեղեցիով, Թերեւս, որոնելու է Բասենում, Հասան-Կալէի մօտ։ Գուցէ սխալւում ենք, եւ Վաղարշակերտը եւ այս դէպքում Բագրեւանդի Ալաշկերտն է հայացրած։ Ամէն պարագային՝ թիւրիմացութեան մասին խօսք չի կարող լինել։ Բագրեւանդի Վաղարշակերտը նոյնչափ խնդրական է, որքան մեր ենթադրեալ համանուն քաղաքը Բասենում։

Կարծելով, որ Հասան-Կալէի տեղ այս քաղաքն է եղել, մենք փորձել էինք որոնել Բողբերդը ոչ Բասենի դաշտում, այլ այն լեռների մէջ, որ պատում են Բասենը հիւսիսից եւ զատում նրան Բուխա դաւառից։

Բուխա Տայոց աշխարհի հարաւային անկիւնն է, փռուած յիշեալ լեռների հիւսիսային